Նրանց յիշատակը մինչեւ այսօր եւս թնդում է եւ բոլոր հէքեաթների ու զրոյցների մէջ շարունակ լսւում է նրանց անունը եւ գրեթէ առասպելական քաջագործութիւնները։ Մինը Բաղդատի խալիֆայ Հարուն-էլ-Ռաշիդն է, միւսը՝ Շահաբաս Ա-ը։ Այսօր եւս ճանապարհորդելով Պարսկաստանում եւ Անդրկովկասում, Թիւրքաստանում, Աֆղանիստանում, Անդրկասպեան երկրում, որոնք Շահաբասի ժամանակ Պարսկաստանի մասերն էին կազմում, կարող էք հանդիպել բազմաթիւ աւերակ եւ շատ տեղ դեռ կանգուն քարվանսարայների, կամուրջների ու մզկիթների, որոնք կոչւում են Շահաբասի անունով։ Աւանդութիւնը ժողովրդի բերանով ասում է, որ Շահաբաս կառուցել է 1001 քարվանսարայ, 1001 մզկիթ, 1001 կամուրջ. թէ ինչու անպատճառ 1001 թիւն է գործածւում, չգիտեմ. բայց այսօր եւս Պարսկաստանում առանց այդ քարվանսարայների անկարելի կը լինէր ճանապարհորդել, մանաւանդ կարաւանների համար։ Շահաբաս կառուցել է այդ քարվանսարայները կարաւանների իջեւանի համար, առեւտրական յարաբերութիւնները դիւրացնելու նպատակով։

Առհասարակ բոլոր մահմետական, թէ ժամանակակից եւ թէ ոչ-ժամանակակից պատմագիրները վերին աստիճանի գովասանքով են խօսում Շահաբասի մասին, իբրեւ մի աշխարհաշէն, իմաստուն եւ արդար թագաւորի, որ իր մեծ գործերի համար "ջանէթ-մաքեան„